

Լէօ. Վանի թագաւորութիւնը.
Մի գրուած Հայաստանի պատմութիւնից¹⁾.
— 2 ֆարեկ. 22 նկար, Թիֆլիս, 1915.

1915 թուականը պ. Լէօի գրչի համար յաջողակ տարի է։ Այս ժամանակամիջոցում նա լոյս է ընծայել չորս բուական ստուար հատորներ, որոնցից առաջինը՝ «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Իսկրոցի»՝ հայ դպրոցի, իսկ միւս երեքը՝ «Հայ Հայրենիքը», «Հայոց հարցի վաւերագրերը» և «Վանի թագաւորութիւնը»՝ Հայոց պատմութեան համար կարեւոր աշխատութիւններ են։ Ինչպէս ազդարարուած է այդ գրքերից մէկում, պ. Լէօն մտադիր է հրապարակել մի ամբողջական Հայոց պատմութիւն, որի գրուածներիցն են լոյս տեսած «Հայ հայրենիքը», «Վանի թագաւորութիւնը», ինչպէս և լոյս տեսնելիք «Հայ ժողովուրդը», «Հայ իշխանութիւնը», «Հայ պատմութիւնը», «Հայ միտքը», «Հայ դպրոցը», «Հայ գրականութիւնը» ևլն։ Ողջունելով պ. Լէօի այդ ձեռնարկութիւնը և ցանկալով օր առաջ հրատակուած տեսնել այդ աշխատութիւնները, անցնենք այժմ «Վանի թագաւորութեանը»։

Այս գրքի նիւթն է Հայաստանի պատմութիւնը նախ քան VI դար (Ք. ա.)։ Ինչպէս յայտնի է եւրոպական արևելագիտութիւնը Առաջաւոր Ասիայի միւս ժողովուրդների պատմութեան հետ իւր հետազօտութեան ոլորտն առաւ նաև Հայոց պատմութիւնը և լուսարանեց ու յեղաշրջեց շատ խնդիրներ ու գաղափարներ, որ մինչև այդ իւրաքանչիւր հայի լիահաւատ վստահութիւնն էին վայելում։ Այն ինչ հայ պատմագրութիւնը Թորենացու գլխաւորութեամբ ուսուցանում էր հպարտութեամբ, թէ Քրիստոսից տասնեակ դարեր առաջ հայերն որպէս ազգ գոյութիւն են ունեցել, այնպիսի դիւցազն—նուաճողներ են տուել, որպիսին են Հայկ, Արամ, նոր գիտութիւնն եկաւ այդ բոլորը մի կողմ գնելու և արիօ-եւրոպացի հայերին իրենց համեստ տեղը յատկացնելու։ Նախաքրիստոնէական ժամանակի պատմութեան մէջ։ Ըստ այսմ

1) «Հայաստանի պատմութիւն» վերնագիրը մեզ Թուում է վիճելի։ Եթէ նախքան VI դար Ք. ա. մենք կարող ենք խօսել միայն Հայաստանի պատմութեան մասին, չէ որ սկսած XIII—XIV դարերից (Ք. յ.) մենք ունենք միայն հայերի—հայոց պատմութիւն։

պարգուեց, որ հայերն արիօ-եւրոպացիներ են, սկզբում ապրելիս են եղել արիօ-եւրոպական միւս ցեղերի հետ միասին, բաժանուած են եղել մանր տոհմերի, նախ քան Հայաստան մտնելը յաժել են երկար ժամանակ եւրոպայում և Փոքր-Ասիայում, ունենալով այդ ճամբորդութեան ժամանակ մի քանի էտապային կէտեր և VI դարում է (Բ. ա.) միայն, երբ տեսականօրէն հաստատուել են այդ նոր հայրենիքում: Իսկ հայերից առաջ այդտեղ բնակուելիս են եղել հաթեան-հեթիթական ցեղի, ըստ պրոֆ. Մառի տերմի-լոգիայի՝ յարեթական (արօտիւտի) ցեղի ժողովուրդներ, որոնց մասին եղած վաղագոյն յիշատակութիւնը գալիս է XIII դարի (Բ. ա.) մի ասորեստանեան արձանագրութիւնից և որոնց պատ-մութիւնն ամբողջովին հիւսուած է ասորեստանեան և ուրարտեան սեպագէտ արձանագրութիւնների ընձեռած տեղեկութիւններից: Այս հաթերն ունեցել են բազմաթիւ մանր իշխանութիւններ, որոնք հետագայում Ասորեստանից կլանուելու սարսափի ներքոյ միացել են զօրեղ Ուրարտուի՝ նոյնպիսի մի հեթիթական իշխա-նութեան՝ գլխաւորութեան տակ: Ուրարտուն սկզբում պաշտպա-նողական կռիւ մղելով իւր հարաւային ուժեղ գրացու դէմ, IX և VIII դարերում բաւական հզօրացել է ու բարգաւաճել, դիմադրա-ւելով աշխարհակալ Ասորեստանին ու խաղալով նշանաւոր դեր Առաջաւոր Ասիայի այդ ժամանակուայ կեանքում: Սակայն յետոյ թուլանալով վերստին ուժեղացած Ասորեստանի հարուածներից, «Յալդիի ծառաների» թագաւորութիւնը վերջնականապէս ջախ-ջախւում է արիօ-եւրոպական արշաւանքների ժամանակ ու իսպառ-անյայտանում պատմական ասպարէզից VI դարում:

Ահաւասիկ այս հաթեան ժողովուրդների, գլխաւորապէս Ուրարտուի պատմութիւնն է, որ տալիս է Վանի թագաւորու-թիւնը: Բաւական ընդարձակ ներածութեան մէջ հեղինակը մանրամասնօրէն առաջ է բերում իրանական, ասորեստանեան, եգիպտական սեպագէտ արձանագրութիւնների աստիճանաբար յայտնագործման ու մեկնման պատմութիւնը, աւելի ևս մանրա-մասնօրէն կանգ առնելով Ուրարտեան սեպագիրքների վրայ, որոնք գտնուել են Վանում և Հայաստանի այլ մասերում:

Ներածութեան հետեւում է Ա. մասը՝ «Երկիրը և մարդիկ» վերնագրով, ուր ընթերցողը ստանում է աշխարհագրական տեղե-կութիւններ Նախըան երկիրների, որոնց մէջ ի հարկէ նաև Ու-րարտուի մասին, թէպէտ «հարեանցի», իմանում է ինչ տեսու-թիւններ ու տարբեր կարծիքներ կան այդ երկիրներում ապրող ժողովրդի ցեղի ու լեզուի մասին, որպիսի քաղաքակրթութիւն ու բազմաստուածեան կրօն է ունեցել դա: Բ. մասը՝ «Նախաժա-նեան շրջան» խօսում է Նախրի երկիրների և Ասորեստանի յա-

բարեութիւնների մասին—ինչպէս վերջինս ուժեղանում է, յա-
նախակի արշաւանքներ է դորձում զէպի Նաիրի ու վերջը ընկնում
է այդ ուղմական տեսակէտից խիստ կարևոր լեռնաստանը,
ինչպէս ապա Նաիրեան երկիրներից մինչև այդ անյայտ մնացած
մի իշխանութիւն՝ Ուրարտու՝ առաջ է մղում ու խմբելով իր
շուրջը միւս հաթեան իշխանութիւնները, քաջարար դիմադրում է
Ասորեստանի գրոհին—Գ. մասը նուիրւած է Վանում նստող
ուրարտեան թագաւորներին, նրանց կատարած աշխարհաշէն դոր-
ժերին ու խաղացած նշանաւոր քաղաքական դերին ժամանակա-
կից Առաջաւոր Ասիայի ուղմարեմի վրայ, մի դեր, որ ըստ հե-
ղինակի «արդէն տիեզերական պատմութեանն է պատկանում»
(Ի. 181)։ Այս մասի վերջին երկու գլուխները յատկացրուած են
ուրարտական կուլտուրային ու ուրարտացիներին փոխադրինող
նոր ժողովրդներին։

«Վանի թագաւորութիւնը» որպէս առաջին փորձ մեր արեւե-
լահայ գրականութեան մէջ մի համադրական մեծ աշխատութեամբ
ներկայացնելու հեթիթական ժողովրդի մասին գիտութեան մինչև
այժմ ընձեռած տուեալները չի կարելի յաջողուած շնամարել։
Ընթերցողի աչքից չի վրիպում, որ հեղինակն ունեցել է ձեռքի
տակ աղբիւրների պատկառելի քանակ և առատօրէն դորձադրել է
այսպիսի դրքերի համար խիստ անհրաժեշտ մանր աշխատանք։
Ապա պ. Լէօի պարզ լեզուն, պատմելու սահուն-վիպական եղա-
նակը, համեմուած համակրութեան դորովալից արտայայտութիւն-
ներով, որ ուղղուած են մեր հայրենիքի այդ երբեմնի բնակիչնե-
րին, դարձնում են Վանի թագաւորութիւնը գրաւիչ, ու միաժա-
մանակ մի դորձնական ձեռնարկ և՛ հայ ուսուցչի, և՛ հայ աշա-
կերտի, և՛ հայ միջին ընթերցողի համար։

Տալով հարկը զրքի արժանաւորութիւններին, կուղէինք կցել
նաև մի քանի գիտողութիւններ։ «Վանի թագաւորութեան» կոմ-
պոզիցիան, մեզ թւում է, «բաժանման մի սկզբունքով» չէ յառաջ
տարուած։ Եթէ Գ. մասը, ուր խօսւում է Վանեան շրջանի մա-
սին, վերաբերում է քաղաքական պատմութեանը, ապա «Ուրար-
տական կուլտուրայի» և «Նոր ժողովուրդի» մասին այդտեղ խօսք
չպէտք է լինի, այլ իւր յատուկ տեղում՝ Ա. մասում. միւս կողմից
էլ եթէ քաղաքական պատմութիւնն՝ անջատուած է կուլտուրա-
կանից, ապա «Նախափանեան» և «Վանեան» շրջանները Ա. մա-
սին հաւասար մի մի մասեր չպիտի կազմէին. այլ քաղաքական
պատմութեան ենթամասեր։

Փոքր-Ասիայի հաթերի պատմութեան վրայ հեղինակը պիտի
մի փոքր ծանրանար, որովհետև նրանք ևս Հայաստանի հաթերին
ցեղակից էին և խաղացել են մի ժամանակ ազդեցիկ դեր Առա-

ջաւոր Ասիայում, որ. Միտանների թագաւորութիւնը, Նոյնպէս և չէ շեշտուած առեւտրի նշանակութիւնն ու տարածուած լինելը հաթեան երկիրների մէջ¹⁾։ — Հեթիթների ու հայերի մարդաբանական տիպի մասին եղած տուեալները տեղ չեն գտել դրքի մէջ. այս խնդրին պ. Լէօն Նուիրել է ընդամենը մի նախադասութիւն (ը. 356), այնինչ սրա վրայ ծանրանալն ևս կարեւոր էր, որովհետեւ որոշ չափով պարզում է հայերի ու հաթիթի յարաբերութիւնները ծագման տեսակէտից։

Քօսեիով հայ ժողովրդի ու հայ լեզուի երկտարր բաղադրութեան մասին, հեղինակն ի պաշտպանութիւն այդ հիպոտեզի առաջ է բերում նաև պրոֆ. Մառի կարծիքը հետեւեալ նախադասութեամբ. «Ինչպէս արդէն դիտենք, ակադեմիկոս Մառի մի շարք լեզուագիտական աշխատութիւնները դալիս են ապացուցելու, որ հայ ժողովրդի լեզուն էլ երկու, իրարից տարբեր տարրերից է կազմուած. այդ «արբեր օտրերին» Մառն էլ տուեց այն երկու անուններ, որոնք հայ ժողովրդի անունն են. այն է հայոց լեզու եւ արմենական լեզու» (ը. 356—357. ընդգծումները մերն են. Վ. Տ. Յ.)։ Այստեղ մի թւարկմանութիւն կայ պ. Լէօի կողմից։ Պրոֆ. Մառն անշուշտ ընդունում է երկտարրութեան հիպոտեզը. բայց նա չի անուանում այդ տարրերը՝ այսինքն ուրախականը (=յարեթականը)՝ «հայոց լեզու» և արիօ-եւրոպականը՝ «արմենական լեզու», ինչպէս հաղորդում է պ. Լէօն։ «Հայոց լեզու» (гайскій или гайканскій) նա կոչում է սկզբնապէս Հայաստանի հարաւ-արեւելքում բնակող ժողովրդի և հետագայում քոչոր հայ իշխանների ու ֆէոդալների լեզուն, իսկ «արմենական» (армянскій) սկզբնապէս Հայաստանի միւս մասերի ժողովուրդների բնական (природный) լեզուն. որ հետագայում քշում է ցած ու միմիայն հասարակ ժողովրդից — աւամիկներից գործածւում²⁾։ Հետ պրոֆ. Մառի այդ երկու լեզուներն էլ ինքնուրոյն են ու լեզուագիտորէն իրաւահա-

1) Պրոֆ. Մառն իր գիրքին «Кавказскій культурный міръ и Арменія» գերնագիրը կրող խիստ շահեկան աշխատութեան մէջ խօսում է այդ տեսակէտից յարեթական առեւտրի մասին։ Հետ նրա մեր հին Պաղատորութեան շրջանի բաղարների զարգացումը նշանաւոր չափով ձեւերբերուեց շնորհիւ յարեթական առեւտրի ապրումների (переживаніи) (ը. 35)։ Իսկ Հերոդոտի նկարագրած հայերի վաճառականութիւնն ու նրա ծանապարհը, Յոյի ենթադրութիւնը մեզ ենթադրելու, չէ որ մատնում են Հայաստանի նախկին բնակիչների այդ առաքրիզում ունեցած արագիցիաների պահպանումը։

2) Кавказскій культурный міръ и Арменія. р. 29.

աւասար: Եւկու լեզուների մեջ էլ արիօ-Եւրոպական խառնուրդներին բա-
ղադրուել են յաբերականները ¹⁾ (ընդգծումները մերն են Վ. Տ. Յ.):

«Ասորական» լեզու, «աւասորագիտութիւն» արտայայտութիւն-
ները մեր գրականութեան մէջ գործ են ածւում Ասորիքի (= Syria)
բնակիչների լեզուի համար (ինչպէս և ներկայումս մեր հարեան
ասորիների լեզուի համար). մինչդեռ պ. Լէօն այդ արտայայտու-
թիւնները գործ է ածում Ասորեստանի (= Assyria) բնակիչների
լեզուի համար: Վերջիններիս լեզուն կոչւում է մեզանում ասո-
րեստանեան կամ ասուրական և հենց այդպէս են գործածում հե-
ղինակի աղբիւրները՝ օրինակ Սանատլճեանը, Հանդէս-Ամսորեան,
բանասէրը ²⁾:

Վերջացնելով դիտողութիւնների այս շարքը, կրկնում ենք,
որ «Վանի թագաւորութիւնը» Հայաստանի նախնական բնակիչ-
ների պատմութեան համար մի օգտակար ձեռնարկ է և այդ տե-
սակէտից յանձնարարելի:

Վաղ. Տէր Յակովբեան.



1) Ibid. p. 50. Հարմարեցւում է մեզ այն հանդամանքը, որ պրօֆ. Մառի այսորիմակ ըմբռնման հետ պ. Լէօն ծանօթ է արդէն եւ այդ ոգով էլ արտայայտուել է իր գրքի p. 75-ում:

2) Պ. Լէօն «Հորիզոնի» սոյն տարուայ 280 համարում իր մի ընդդի-
մախօսութեան մէջ post scriptum գալիս է յայտարարելու, որ «աւասորական»
լեզու ասելով նա հասկանում է Ասորեստանի լեզուն, իսկ Ասորիքին անուա-
նում է Սիրիա, իսկ ասորիներին՝ սիրիացիներ: Մեզ թւում է դրանից գա-
ղափարների մի մեծ շփոթութիւն պիտի առաջանայ «ասորի» բառի շուրջը,
արտհետեւ մեր գրականութեան մէջ այդ անունով յայտնի են եղել Սի-
րիայի, իսկ այժմ էլ են մեր գրացի ասորիները: Քանի որ մենք ունինք
Ասորիք, ասորական բառերը մի կողմից եւ Ասորեստան, ասորեստանեան
կամ ասուրական միւս կողմից, իրարից բոլորովին բաժան ու օրոշ, ապա
արդարացումն չէ գտնում պ. Լէօն տեքմիկոլոգիական նորամուծութիւնը: